



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

Թիւ 29/20

Անթիլիաս, Ս. Զատիկ 2020

Գերաշնորհ
Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան
Առաջնորդ Ամերիկայի Արեւելեան թեմին
Նիւ Եորք

Սիրելի՛ Սրբազան,

Տագնապի ու անորոշութեան ճիրաններուն մէջ տուայտող աշխարհին մէջ դա՛րձեալ կը հնչէ ձայնը Յարուցեալ Քրիստոսին՝ **”Մի՛ վախճար, միայն հաւատա՛”** (Մր 5. 36):

Արդարեւ, վախը իր տիրապետութիւնը կը հաստատէ, երբ Աստուած բացակայ է մարդկային կեանքէն: Հաւատքն է, որ մարդուն կեանքը Աստուծոյ ներկայութեամբ կը զինէ՝ դիմագրաւելու աշխարհի փորձութիւններն ու փորձանքները: Մեր ժողովուրդին պատմութիւնը պերճախօս վկայութիւն մըն է՝ հաւատքի գօրութեամբ յաղթելու ամէն տեսակ չարիք ու տագնապ:

Ճգնաժամի մէջ գտնուող աշխարհին ու նաեւ մեր ժողովուրդին եկեղեցւոյ պատգամը նո՛յն պատգամն է Քրիստոսի՝ մի՛ վախճա՛մ, միայն հաւատացե՛՛ք. մի՛ վախճա՛մ, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին (Յհ 16. 33):

Մեր կեանքը շրջապատող այս տագնապալից օրերուն, կ’աղօթեմք մեր ժողովուրդի գաւակներուն եւ մեր ընտանիքներուն առողջութեան ու անվտանգութեան համար: Թող Բարձրեալն Աստուած հեռու պահէ Ձեզ, հոգեւոր դասը, ազգային իշխանութիւնը եւ թեմի հաւատացեալները չարէ ու չարիքէ: Թող մահուամբ մահը յաղթած Քրիստոս իր հրաշափառ յարութեամբ հեռու պահէ աշխարհը ամէն տեսակ չարիքներէ:

Հայրական ջերմ սիրով,

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ